№ 252 ՈՒՐԲԱԹ, 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 252

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տէլէֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԹԵՐԹԱԳՈՐ ԱՐԾԹՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի 8 ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրամանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

„ԱՂԲԻՒՐ" ԵՒ „ՏԱՐԱՋ"

Լոյս տեսան ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № №-ը։

Կողմնակի անձինք, որոնք բաժանորդ չեն «Տարազին», գնելով այս №-ը «Տարազի, կարող են ներկայ լինել այսօր երեկոյեան Գրական-Դեղագիտական Սալոնի հերթական jour fixe-ին։ —◆— Սկիզբը երեկ. ժամը 9-ին։ —◆— «Տարազի» №-ը 1 ռուբլի։

առ. 54. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օգնական. Մոսկվայի համալսարանի և ասսիստենտ Բերլինի համալսարանի պրոֆ. Պողնէրի։
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշւոյի հիւանդութիւններով՝ առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6։ Սօլոլակ, Բարիշեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տէլէֆոն 10—58.
(չ. ու. կ.) առ. 875. 50—23

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՈՆՃԵԱՆ
վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլօմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Ներսիսեանցի փողոց № 1. մուտքը Նրբափողոցից։
առ. (ա. օ.) 804. Ո—54

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 Նոյեմբերի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Կ. Պոլսից հեռագրում են, որ գեներալ Սանդերսը իր շտաբի հետ մեկնեց մի քանի օր առաջ ռուս-թիւրքական սահմանը՝ Թիւրքաց զօրքին հրամանատարելու համար։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Դերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Սև-ծովում մեր նաւատորմը ռմբակոծեց Տրապիզօնի անթել հեռագրատան կայանը և զօրանոցները։

Նոյեմբ. 4-ի արշալոյսին Սև-ծովի նաւատորմը մօտեցաւ Թիւրքաց Տրապիզօն բերդին և, ռմբակոծելով նաւահանգիստն ու զօրանոցները, առաջ բերեց ափում մեծ հրդեհ։ Ծովի վրա թիւրքաց ռազմանաւեր չը նկատվեցին։

ՈՒՐՄԻԱ.— Նոյեմբերի 1-ին մեր հեծելազօրը ջարդեց թիւրքերին Դուսախի մօտ։ Թիւրքերը փախան կորցնելով աւելի քան 200 սպանված։

Զը դիմանալով մեր զօրքերի գրոհին, քիւրդերը յանդուգն կերպով անհանգստացնում են պարտիզանական գործողութիւններով։ Քիւրդերը կողոպտել են Զէվաշիկ գիւղը, որ մօտ է Դիլմանին։ Սամայի քիւրդերը անցնում են Թիւրքիայի կողմը։ Մալիդինանում նոր հրոսակախմբեր են կազմակերպվում Թերդէվերում մեզանից ջարդված քիւրդերից։

(Շրեկոյեան հաղորդագրութիւն)

6 Նոյեմբերի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Անդրճորոխեան շրջանում ընդհարումները շարունակվում էին։

Օլթի-չայի հովտում ջարդված թիւրքական զօրախումբը ետ է մղված դէպի Բարու։

Էրզերումի ուղղութեամբ կռիւները տեղի ունէին ամբողջ ֆրօնտի վրա։ Պատերազմական գործողութիւններն այստեղ դժուարանում են շնորհիւ ճանապարհների բացակայութեան։

Միւս զօրամասերում պատերազմական նշանաւոր ընդհարումներ չեն եղել։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 Նոյեմբերի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ «Մ. ու Ա.» կոմիտէի նախաձեռնութեամբ կազմակերպվեց բազմամարդ մի-տինգ Սուլթան Ահմէդի հրապարակի վրա։ Պարլամենտի և կոմիտէի անդամներից մի քանիսը արտասանեցին ճառեր, աշխատելով բորբոքել ժողովրդի ֆանատիկոսութիւնը երբեկ համաձայնութեան պետութիւնների դէմ, մասնաւորապէս Ռուսաստանի դէմ։ Զմիւռնիա քաղաքի պատգամաւոր՝ «Մ. և Ա.» կուսակցութեան պարագլուխ Սէիդ-բէյը կրկնում ու զրգռիչ ճառ արտասանեց ընդդէմ Ռուսաստանի, համոզելով թիւրքերին կռուել ռուսների դէմ և ջախջախել դաւաւոր թշնամուն։ Ֆանատիկոս ճառերից յետոյ՝ ամբոխը բաղկացած թափառաշրջիկներից, համալներից և այլ տականքներից, որոնք ոռճիկ են ստանում կոմիտէից, բաժանվեց երկու խմբի, մինը դիմեց դէպի Սան-Ստեֆանո, ուր քարուքանդ արեց 1878 թ. պատերազմի պատմական արձանը և մասամբ Ղալաթիայի ռուսաց եկեղեցին. միւս խումբը դիմեց Պերայի եւրոպական թաղամասի փողոցներով և քարուքանդ արեց ճանապարհին ռուսահպատակ մի հայի մեծ սրճարանն ու հիւրանոցը, ըստ որում պոկեց դռները, ջարդեց պատուհանները և տանն ու վրա արաւ կահկարասիքը։ Քրիստոնեայ ազգաբնակութիւնը յուսահատված է և սարսափով սպասում է կոտորածի, ի նկատի ունենալով մահմեդականների մոլեռանդ յուզմունքը։

Կ. Պոլսից հաղորդում են, որ երիտասարդ-թիւրքերի «Ժէօն-Թիւրք» լրագիրը խորհուրդ է տալիս Բալկարիային գրաւել բովանդակ Մակեդոնիան, Եւրոպային դնելով կատարված փաստի դիմաց։ Ցանձին Թիւրքիայի՝ Բալկարիան, լրագիրը ասելով, կը գտնէ հաւատարիմ ազակցութիւն, որովհետև երկու պետութիւնները կապված են շահերի համանմանութեամբ ու անկեղծ բարեկամութեամբ։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ.—Թիւրքահպատակ հայերը՝ մաղթանք կատարելով ռուսաց զէնքի յաղթութեան համար, ուղարկեցին հեռագիր Կովկասի փոխարքայի միջոցով Թագաւոր Կայսրին, արտայայտելով հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ և հաւատ յայտնելով, թէ խաչը կը յաղթանակէ ս. Սոֆիայի գլխին և թէ ռուսները կը գրաւեն Ցարգրադը։

(Լրագիրներից)

◆ «Թանինը» առաջնորդող յօդուածում գրում է. «Բոլոր մահմեդականները, ուր էլ և ինչ դրութեան մէջ էլ որ լինեն, զէնքը վայր չեն դնի, մինչև որ չընկնեն հերոսական մահով, կամ թէ չընկճեն երբեկ համաձայնութիւնը»։

◆ Թիւրքիան ամեն կերպ աշխատում է համոզել Պարսկաստանին հանդէս գալ Կովկասեան սահմանագլխում։ Այդ նպատակով Կ. Պոլսից Թէհրան է ուղարկված յատուկ սուրհանդակ։

◆ Լօնդօնի «Գլոբ» լրագիրը գրում է. «Թիւրքերը պէտք է արտաքսվեն Եւրոպայից։ Անգլիան ոչինչ դէմ չի ունենայ, եթէ Կ. Պոլիսը և Թիւրքաց Հայաստանը անցնեն ռուսաց իշխանութեան ներքոյ։ Ֆրանսիան պէտք է ստանայ Սիրիան և հովանաւորութիւն սուրբ տեղերի վրա, Ռուսաստանը՝ Եդեսիան ծովի կղզիները, Անգլիան՝ Արաբիան և Եփրատի հովիտը։

◆ Իգդիրից հեռագրում են «Ռ. Հ.»-ին. «Երկու օրվայ կռուից յետոյ՝ ընդդէմ համիդիէների երեք գնդերի՝ Վանի շէից դէպի հիւսիս-արևելեան կողմում, Բեքրի-օվա հովտում, հայ կամաւորների գունդը գրաւեց Կղզլը-Քիլիսէն։ Թշնամին կռուի դաշտում թողեց 150 դիակ»։

◆ Ատրպատականի Աբաջիկ նահանգում 30 գիւղի սեփականատէր Ամիր-Թումանը անցել է ռուսների կողմը, խոստանալով կռուի հանել մի քանի հարիւր ձիաւոր։

◆ Ամրողջ Ալաշկերտի հովիտը ներկայումս մեր ձեռքումն է։

◆ Սիմֆէրօպոլից, Ախալցխայից և Մերվից նոյնպէս մեկնել են հայ կամաւորներ։

◆ Անգլիական հիւպատոսը պահանջել է ռումինական իշխանութիւններից զինաթափ անել ռումինական նաւահանգիստներում գտնվող թիւրքաց ակասնաւերին։

◆ Թիւրքաց զահաժառանգին հեռացրել են Կ. Պոլսից և, ինչ որ յանձնարարութիւն տալով, ուղարկել են նրան Հռոմ։

◆ Համիդիէները կողոպտում և հրդեհում են հայկական գիւղերը։ Հայ գիւղական ազգաբնակութեան դրութիւնը օղալի է։ Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն կովկասահայերի կողմից։

◆ Թիւրք զօրքերը գերմանացիների առաջնորդութեամբ ներս են խուժել Լիվան, խախտելով նրա չէզոքութիւնը, որ ստորագրվել է 1862 թ. մեծ պետութիւնների ձեռքով, որոնց թւումն է նաև Իտալիան։

◆ Դաշնակից նաւատորմը Զմիւռնիայի մօտ քանդել է ռազմական կարևոր նշանակութիւն ունեցող երկաթուղագիծը։

◆ Կ. Պոլսում հրաման է արձակված Դալիպոլիի թերակղզին քրիստոնեաներից մաքրելու մասին։ Դաշնակից նաւատորմը ռմբակոծում է Դալիպոլիի բերդերը։ Թիւրքերը պատասխանում են եռանդով։

◆ Բ. Դուռը ամենատիպ է տուել յունաց ջարդի մեղսակիցներին։

◆ Բոլգար կառավարութիւնը առաջադրութիւն է արել Բ. Դրանը ազատելու քաղաքական բոլգար բանտարկեալներին։

◆ Բուխարէստում գրաւել են այն հեռագրական պարագաները, որ Գերմանիան ուղարկում էր Թիւրքիայի համար։

◆ Այս օրերում Բումինիայի վրայով Թիւրքիա է մտել 8000 կիլոգրամ գերմանական ոսկի։

◆ «Baku»-ի թղթակիցը հեռագրում է Սարիղամիշից. «Այն հայաբնակ վայրերից, ու տեղի են ունենում կռիւներ, բնակիչները սարսափահար փախչում են ռուսաց երկիրը։ Փախչողների շարքերը ողբալի պատկեր են ներկայացնում։ Գալիս են հազարներով, սայլերով, էշերով, եղների վրա, տնանկ ու անօգնական... Տեղ չը կայ տեղաւորելու խեղճերին, ոչ օք չը կայ, որ հոգայ նրանց մասին։ Հայ ինտելիգենցիայի պարտականութիւնն է, որ լաւ է հասկանում ներկայ պատերազմի նշանակութիւնը, կազմակերպել նպաստամատոյց օգնութիւն գաղթականներին, մինչև որ ռուսաց յաղթական զօրքը մտցնէ հանգստութիւն և կարգ ու կանոն Թիւրքաց-Հայաստանում։ Կարիքը մեծ է, սուր և շտապողական։ Պէտք է օր չը կորցնել։ Թող տեղս եկող հայ ուսանողութեան մի մասը իրան նուիրէ այդ գործին»։

◆ Թիւրքիայում յայտնի հայերի ձերբակալութիւնները շարունակվում են։

◆ Սարիղամիշից «Baku»-ի թղթակից Շահնազարեանը հեռագրում է, որ երեք օր շարունակ տեղի էին ունենում յամառ կռիւներ, որոնց մասնակցեցին խոշոր ոյժեր երկու կողմից։ Թիւրքերը մեծ կորուստ ունեցան. ենթադրվում է, որ նրանց սպանվածների և վիրաւորների թիւը 15,000-ից պակաս չէ։ Մեր առաջապահ զօրամասերը անցել են նորից 18 վերստ։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ ամբողջ Թիւրքիայում բերդերը լի են քրիստոնեաներով։

ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԸ ՆԵՐԿԱՑ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ

Կ. Պոլիս, 22 հոկտ.

Ազգային շրջանակի մէջ այս միջոցիս ներքին լուռն պայքար մը կը մղուի մի քանի շահախնդիր անձերու դէմ, որոնք կուզեն ազգը շահագործել։ Ինչպէս արդէն գրած էի ասկէ առաջ, կառավարական շրջանակներու հետ շփում ու առնչութիւն ունեցող մարդիկ վերջին օրերս իրենց բան-գործը դրած են ազգին-անդին, շրջենաւերու ու հանրակառքերու մէջ չարաչար քննադատել պատրիարքն ու վարչութիւնը, իբր ազդակործան ուղղութեան մը հետևող։

Այս քննադատութիւնները հասած ըլլալով մինչև ենթականերուն ականջը՝ առաջ բերած էին որոշ չափով վհատութիւն և շուարում և պատասխանատուութեան երկիւղ։

Հետևաբար վարչութիւնը վերջին անգամ կրկին որոշեց դիմում կատարել ազգ. ժողովի դիւանին, որ խմբակցութեանց ներկայացուցիչները նիստի կոչէ և անոնց կարծիքը իմանայ, ինչպէս նաև վարչութեան բացատրութիւնները լսուին։

Այս գումարումը արդարև տեղի ունեցաւ, և վարչութեան ատենապետ Դօկտ. Դաւիթեան բացատրեց ու պարզեց վարչութեան ընդդրկած ուղղութիւնը։

Խմբակցութեանց ներկայացուցիչները առհասարակ վարչութեան հետապնդած ուղղութեան դէմ չարտայայտուեցան։ Վարչութեան ատենապետը՝ մասնաւորապէս ծանրացած ըլլալով զօրակոչի հետևանօք դաւառներու մէջ տիրող վիճակին և հայոց ենթարկուած անտանելի վիճակին վրայ՝ խնդրած էր, որ խմբակցութեանց ներկայացուցիչները, եթէ կարող են, այս մասին դարման մը ցոյց տան և ազգային վարչութիւնը պատասխանատու չը բռնեն։

Ահա այս մասին գտնված կարծիքներ արտայայտուած են։ Ընդհանուր կերպով մը անոնց ոգին սա էր, որ պատրիարքարանը կարելի եղածին չափ մօտենայ օսմ. կառավարութեան և սիրաշահող ուղղութեան մը հետևի։

Այս արդիւնքին ալ հասնելու համար՝ գտնված միջոցներ առաջարկուած են։ Նախ ըսուեցաւ, թէ պէտք չէ զայրացնել թիւրք հանրային կարծիքը զրգռիչ դիրք մը առնելով, յետոյ՝ պէտք էր հայոց լոյալութիւնը շեշտել և թիւրքերու զգացումները մեղմել։

Նոյնիսկ խորհող ու առաջարկող գտնուեցաւ, որ դիմուի Ամենայն Հայոց Կաթողիկոսին և անոր միջոցաւ արտասահմանի հայ մամուլին կոչ մը ըլլայ՝ չափաւոր լեզու գործածելու և նկատի առնելու թիւրքահայոց տագնապալի կացութիւնը։ Այս առաջարկին ոյժ տուին բազմաթիւ հնչակեան և դաշնակցական ընկերներ։

Առաջարկուեցաւ նոյնպէս, որ առանձին յանձնաժողով մը ընտրուի, և այդ մարմինը վարչութեան հետ միջոցներ մշակէ՝ թիւրքահայերուս ներկայ ծանր կացութեան դարման տանելու։

Այս առաջարկները լսելէ յետոյ՝ վարչութիւնը առանձին խորհրդակցեցաւ առանձին նիստի մը մէջ։

Յանձնաժողովին կազմութիւնը քարոզչութեան դարձաւ։

Վարչութիւնը եթէ ինքն ընտրէր այս տեսակ մարմին մը, այն ատեն անիկա ստորադաս դիրք մը ունեցած պիտի ըլլար և երբէք զիրենք պատասխանատուութենէ չպիտի փրկէր։

Իրենցմէ աւելի հեղինակութիւն կամ իրենց չափ ոյժ ու զօրութիւն ունեցող մարմին մը միայն ազգային ժողովին կողմէ կրնար ընտրուիլ, որով հարկ էր, որ ազգ. ժողովը գումարուէր այս ընտրութիւնը կատարելու համար։

Ասոր դէմ ալ երկու առարկութիւն մեկնեցաւ։

Ազգ. ժողովի գումարումը այս փոփուկ վիճակին մէջ վնասակար համարուած էր. հիմա՝ նախ այդ վտանգաւոր համարուած բանը ընել հարկ պիտի ըլլար, և երկրորդ՝ ազգ. ժողովի գումարման պարագային ո՞վ ցոյց պիտի տար յանձնաժողովի գումարման պէտքը։ Եթէ վարչութիւնը այս տեսակ պէտք մը ցոյց տար, խոստովանած պիտի ըլլար իր անկարողութիւնը և աջակից խնդրած պիտի ըլլար, ինչ որ վարչութիւնը չէր ուզեր ընել, քանի որ ինքը չէր, որ այս գաղափարը ունեցած էր։ Իսկ եթէ ուրիշներ առաջարկէին, ատիկա ալ անվտահութեան հանդիսաւոր արտայայտութիւն մը պիտի ըլլար և իրենց պաշտօնը թողուլ հարկ պիտի ըլլար։

Հետևաբար ազգ. ժողով գումարելու նախաձեռնութիւնը և յանձնաժողով մը իր կողմէն ընտրելու առաջարկը միանգամայն մերժելով, վարչութիւնը ազգ. ժողովի գումարման մասին մայր դիւանի կարծիքը լսելու որոշում տուաւ։

Արդարև՝ մայր դիւանը քաղաք. ժողովի նիստին ներկայ եղաւ և անոր հետ խորհրդակցութիւն մը կատարեց ազգ. ժողովի գումարման համար։ Մայր դիւանը հարկեցուցիչ պատճառ մը չտեսաւ ազգ. ժողովի գումարման համար, քանի որ վարչութեան մասին անվստահութիւն չկայ։ Գալով յանձնաժողովի մը կազմութեան խնդրոյն, այդ բանին անհրաժեշտ պէտք չտեսնուեցաւ։ Ընդհակառակը, Խճճասարեան էֆ. (դեր-ատենապետ) ընդդիմացաւ յանձնաժողովի կազմութեան և պահանջեց, որ վարչութիւնը առանձին գործէ, իր պատասխանատուութեան տակ, և՝ եթէ հարկ դատէ՝ խորհրդակցի զանազան անձերու հետ և անոնց կարծիքէն օգտուի։

Վարչութիւնը այս թելադրութեան վրայ որոշեց խորհրդակցութեան կոչել նախորդ վարչութեանց անդամներէն ոմանք, ինչպէս նաև ազգին մէջ հեղինակութիւն ունեցող կարգ մը անձեր։ Այս գումարման՝ որ երկու օր առաջ տեղի ունեցաւ՝ ներկայ գտնուեցան ի մէջ այլոց Հմայեակ եպ. Դիմաքսեան, Վահրամ եպ. Մանկունի, Պետրոս Հալաճեան, Դր. Զօհրապ, Վարդգէս, Բիւզանդ Քէչեան, Հ. Խճճասարեան, Մանուկ Ազարեան, դօկ. Սեղրոսեան և այլք։

Դօկ. Դաւիթեան բացատրեց այն շարժառիթները, որոնք պատճառ եղած էին այս գումարման, և անոնց խորհուրդ հարցուց։

Ամենքն ալ արտայայտուեցան և զանազան կարծիքներ յայտնեցին։ Ընդհանուր կերպով ամենքն ալ համոզուած էին, թէ ազգը կը գտնուի ճգնաժամային շրջանի մը մէջ և հարկ էր, որ զգուշական միջոցներ ձեռք առնուէին։

Մասնաւորապէս Բիւզանդ Քէչեան ներկայ օրերուն և 1878-ի օրերուն միջև մեծ նմանութիւններ գտաւ և ըսաւ, թէ եթէ բանիբուն առաջնորդներ և խելացի վարիչներ գտնուին դաւառներու մէջ, աստիճան մը կրնայ մեղմանալ ազդը և թիւրք հանրային կարծիքը չի զրգռուիր։

Բազմահմուտ հրապարակագիրը դիտել տուաւ, թէ 1828-ին և 1878-ին երկու անգամ Էրզրում գրաւուեցաւ և երկու անգամն ալ Էրզրումցի հայոց համար իրարմէ տարբեր արդիւնքներ ունեցաւ ժամանակին առաջնորդներուն ըմբռնումին և ընթացքին պատճառով։

1828-ին հայերը չափազանց խանդավառուեցան Ներսէս Աշտարակեցիի օրինակովը քաջալերուած և չարաչար տուժեցին, և երբ ռուս զօրքը մեկնեցաւ, բանակին հետ ընկերանալ պարտաւորուեցան իրենց առաջնորդին՝ Կարապետ եպիսկոպոսի հետ։

1878-ին, ընդհակառակը, Էրզրումի առաջնորդութեան գլուխը կը գտնուէր Յարութիւն եպ. Վեհապետեան (յետոյ պատրիարք), որ կրցաւ չափաւորութեան մէջ պահել ժողովուրդը և ուղիղ յարաբերութիւններ պահպանել, որով երբ ռուս բանակը մեկնեցաւ, հայք երբէք պարտաւորուած չզգացին ինքզինքնին՝ մեկնելու և գաղթելու։

Հիմա ալ անցեալին փորձառութենէն օգտուելով պէտք է հայ առաջնորդները շրջահայեաց ըլլան և ուղիղ յարաբերութիւն մը մշակեն և գիտնան՝ տալ Կայսերն՝ Կայսեր և Աստուծոյն՝ Աստուծոյ։

Յետոյ արտայայտուեցան ուրիշ կարծիքներ, և առհասարակ ամենքն ալ համաձայն գտնուեցան սա կէտին վրայ, թէ օսմանեան կառավարութեան վարիչներու հետ լաւագոյն յարաբերութիւններ մշակելու պէտք կայ, որոնք սակայն պէտք չէ անպատասխանատու անձերու, այլ ուղղակի պատրիարքին և վարչութեան կողմէ մշակուին, և ազգին կողմէ պէտք չէ որ կողմնակի ձայներ լսուին, այլ մէկ ձայն մը, որ

ԳՈՂԿՈՒՅՍՈՒԴԻ

ԳՈՂԿՈՒՅՍՈՒԴԻ ԳՈՂՈՎՍԿՈՒՏՅՈՒՆ ԺԱՎԱՎ

Ի

Ինչպես հայտնի է, Գողկուդի գոլովսկուտյունը ունի 4 օր։ Գոլովսկուտյունը հաստատվեց Ռուսաստանի Գերագույն հրամանատարության կողմից։ Գոլովսկուտյունը ունի մի քանի գրասենյակներ։ Գոլովսկուտյունի գրասենյակները գտնվում են Գողկուդի գոլովսկուտյունի տարածքում։ Գոլովսկուտյունի գրասենյակները ունեն հետևյալ հասցեները։ Գոլովսկուտյունի գրասենյակները գտնվում են հետևյալ հասցեներում

թշնամու դիրքերի խրամատների գծին և ձեռք են ձգում նրանց։

Զէնատօխօվ-Կրակով զօրաճակատում մեր զօրքերը յարձակումներ են գործում թշնամու խոշոր ոյժերի վրա, ըստ որում Վլօդովիցէի մօտ թշնամին փախուստի դիմեց։

Գալիցիայում մենք ասիճանաբար դրաւում ենք Կարպատների լեռնանցքը։

Ծովային գեներալ շտաբը պաշտօնապէս յայտնում է, որ նոյեմբ. 4-ին առաւօտեան Լիբաւային մօտեցաւ գերմանական մի նաւատորմ՝ բաղկացած երկու յածանաւից, մի քանի շոգենաւից և 10 ականանաւից։ Գերմանացիք նորից ռմբակոծեցին քաղաքը և նաւահանգիստը, առաջ բերելով մի քանի հրդեհ։

ՓՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

4—5 նոյեմբերի

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն. «Իպրից դէպի հարաւ ու արևելք թշնամին յարձակումները վերսկսեց, որոնք սակայն չը փոխեցին ընդհանուր դրութիւնը։ Վերջին երկու օրում մեր յարձակումները վերջացան աւելի կամ պակաս աջողութեամբ։ Մենք առաջացել ենք Իզէտում Էտասի մօտ։ Գերմանացիք ռմբակոծում են Բէյմսը և տաճարը»։

ԼՕՆԴՕՆ.—Ամստէրդամի լրագրի թղթակիցը հաղորդում է Սլիւսից, որ գերմանացիք ահագին կորուստ ունեցան Դիկմիւդէն գրաւելիս։ Զինուորները պատմել են, որ 3000 հոգուց բաղկացած զօրամասից վերադարձել են ընդամենը 100։ Այստեղ լսելի էին ուժեղ պայթումներ։ Հաղորդում են, որ բրիտանացի մի օդաղնաց պայթեցրել է Զէպբրիւգէի գործարանը, ուր կառուցվում էին ստորջրեայ ռազմանաւեր։ Դաշնակիցները ռմբակոծեցին ծովից Կօլմէի գործարանը, ուր պատրաստվում էր ռազմամթերք։ Մի ռումբով ոչնչացվեց գերմանական զէնացքը, որի ժամանակ շատ գերմանացի սպանվեցին։

Հավասի գործակալութիւնը հաղորդում է. «Նոյեմբ. 4-ին տեղի ունեցան շատ թնդանօթային կռիւներ ու առանձին յարձակումներ, բայց մենք բոլորը վանեցինք։ Հիւսիսային ծովից սկսած մինչև Լիս գետը տեղի ունեցաւ բաւական ուժեղ թնդանօթաձգութիւն, որ իր գագաթնակէտին հասաւ Նիւպորի մօտ և Իպրից դէպի հարաւ։ Զուաւները փայլուն սուլինային գրոհով Դիկխուտէի մօտ տիրեցին անտառին, որի համար կռիւ էր երեք օր շարունակ։ Անգլիական զօրքը նոյնպէս պահեց իր դիրքերը»։

Կրանի շրջանում մեր թնդանօթաձիգ վաշտը մի քանի աջող գործ ունեցաւ թշնամու մարտկոցների հետ։ Բէյմսի ռմբակոծութիւնը շարունակվեց։ Սէն-Միել շրջանում մենք, չը նայած գերմանացիների հակայարձակումներին, պահեցինք Շավօնիկուրի արևմտեան մասը։ Էլզասի լանվէրը զօրամասերը, որոնք ուղարկված էին Սէն-Մարի-Օմին, ստիպված եղան վերադառնալ, կորցնելով իրանց կազմի կէսը։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 նոյեմբերի

ՆԻՇ.—Սերբական «Պրէսա-Բիւրօ» հաղորդում է, որ բոլոր նախատեսված տեղափոխութիւնները սերբը զօրքերը կատարել են լիակատար կարգ ու կանոնով նոյեմբերի 1-ին և 2-ին։ Զօրքերի տրամադրութիւնը շատ լաւ է։ Պատերազմական գործողութիւնների յետագայ ընթացքին կարելի է նայել լիակատար հանգստութեամբ։

Նոյեմբերի 3-ին սերբական թնդանօթներից աջող կրակ բացվեց Օրշօվում և նրա շրջակայքում գտնվող թշնամու զօրքերի դէմ։ Թշնամին փախաւ, թողնելով 600 սպանված և մեծ թիվ վիրաւոր։

Օրբէնօվիցայի ուղղութեամբ նոյեմբերի 1-ին սերբական մի զօրամաս ջարդեց թշնամու երկու զօրախմբի, որի կազմի մէջ կային հետիոտն թնդանօթաձիգ ու հեծեալ մասեր։ Թշնամին ցիրուցան եղաւ անկարգ փախուստով։

Սերբ հեծելազօրը կռիւ ունեցաւ թշնամու դէմ Ուբայից դէպի հիւսիս-արևելք, ուր թշնամին պարտվեց, և կռիւի դաշտում թողեց 1000 սպանված ու վիրաւոր։ Սերբական հեծելազօրը հալածեց թշնամուն մինչև Տամնավա։

Նոյեմբերի 2-ին սերբական զօրքերը Բայնաբաշտի մօտ վանեցին թշնամու շեշտակի արշաւը և նրան մեծ վնաս հասցրին։ Թշնամու երկու վաշտ ոչնչացան թնդանօթային կրակով։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

4 նոյեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Շվէդական «Անդրէա» շոգենաւը Հիւսիսային ծովում կպել է ականի և ջրասուզվել։ Նաւատէրերին ազատել և տարել են Գալլ։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՔԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

5 նոյեմբերի

ՀՌՈՄ.—Հաղորդում են, որ հաւանական է համարվում Լօնդօնի, Բերլինի, Պետրոգրադի և Բէլգրադի խաչ. դեսպանների գաղտնաժողովը Հռոմ՝ Սօնինոյի հետ խորհրդակցելու նպատակով։

ՊԱՐԻԶ.—Բօտերդամից հեռագրում են, որ նոյեմբերի 3-ին գերմանական մի «Ցէպպէլին» ընկել է Մաստրիխտի շրջակայքում՝ գերմանական սահմանի մօտ և ջարդվել է։

ԲՕՐԴՕ.—Կառավարութիւնը դեռ չէ քննել պալատները գումարելու և Պարիզ վերադառնալու ժամանակի հարցը։ Կասկածից դուրս է, որ պարլամենտը գումարվելու է դեկտ. 2-ի և 7-ի միջև։ «Թանի» ասելով, կառավարութիւնը վերադառնալու է Պարիզ մի քանի օր առաջ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Սերբական դեսպան Սպօլյկովիչը բաղդ ունեցաւ ընդունվել մասնաւոր ունկնդրութեան Նորին Կայսերական Մեծութիւնից։

Բարձրագոյնս հաստատվեց այն օրոշումը, որի համաձայն Ֆինլանդիայում ևս պատերազմական ժամանակի ընթացքում արգելվում է ոգելից խմիչքների առևտուրը։

Բժշկական խորհուրդը անհրաժեշտ գտաւ օրոշել, որպէսզի դեղատները գինու սպիրտը երկրորդ անգամ բաց թողնելիս անպայման պահանջեն բժշկի ստորագրութիւն։

Լօռում ձիւն է եկել։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՔԸ

—

✦ Պաշտօնական Թէերով՝ գերմանացիների դէմ մղված կռիւներում անգլիացիք առ 1-ն նոյեմբերի կորցրել են 2426 օֆիցերի և 9 գեներալի։

✦ Գերմանացիք շտապով պատրաստվում են հանդիպելու ռուսներին Սիլեզիայի շրջանում, յենվելով Օտրնի և Բրէսլաւի վրա։ Շրջակայքի ազգաբնակութիւնը փախչում է։ Արևելեան Պրուսիայում իրարանցում է։ Բէլգիայից գերմանական զօրքերը շտապով անցնում են ռուսական սահմանը։

✦ Սօլդաուի մօտ յամառ կռիւները շարունակվում են։ Ռուսաց զօրքերը մօտենում են Պերեմիշլին։

✦ Սերբական գլխաւոր բանակը այժմ գտնվում է Կրագուէվացում։ Աւստրիան Գերմանիայի պահանջով վեց զօրաբանակ է կենտրոնացրել սերբական սահմանագլխում՝ Սերբիային չախչախելու և Բոլգարիա մղտնելու նպատակով, որը դրանից յետոյ հանդէս կը գայ ի պաշտպանութիւն Աւստրիայի և Գերմանիայի։

✦ Վերջին տեղեկութիւնների համաձայն, Բոլգարիան, Թիւրքիան, Գերմանիան և Աւստրիան կապել են իրար մէջև պայմանագիր, ուղղված Ռուսաստանի և Անգլիայի դէմ։

✦ Ինչպէս հաղորդում են, Բոլգարիան զօրահանութեան ձեռնարկեց Բելգրադից ուղարկված կարգադրութիւնից յետոյ։

✦ Լուրերի համաձայն, դաշնակիցները գրաւել են Օստենդէն։

✦ Անգլիայում կանոնց մէջ սկսվել է ոգելից ըմպելիքների գործածութիւն մեծ չափով, որի դէմ բողոքում է գեն. Բուտը։ Ոստիկանութեան ձեռք առած միջոցների շնորհիւ պտռնկութեան թիւը քչացել է։

ՀՆԴԻԿՆԵՐԻ ՔԱՋՈՒԹԻՒՆԸ

—

«Ֆրանսական «Պրէս» թերթը մի հետաքրքրական էպիզոդ է հաղորդում, որ տեղի է ունեցել Իպրին գետի մօտ եղած կռւում, որի մէջ գլխաւոր դեր են խաղացել զուրները (ֆրանսական գաղութի զօրքերից)։ Գետի ափին մօտիկ գերմանացիները դրել էին մի քանի ծանր թնդանօթներ։ Հրետանիները դրված էին այնպիսի անտեսանելի տեղեր, որ դաշնակիցների բոլոր ջանքերը՝ նրանց լռեցնելու՝ ապարդիւն անցան։ Սակայն ֆրանսական օդաչուներին աջողվեց գտնել գերմանացիների թնդանօթների և ռազմամթերքի տեղը։

Գիշերը անգլիական երկու թնդանօթակիր նաւ նստեցրին զուրկների մի վաշտ։ Թնդանօթակիրները հանգցրած ճրագներով մօտեցանին գետի ակունքին, և զուրկների վաշտը ափ իջեցրին գերմանացիների դիրքի մի թեւում։ Վաշտը երկու ժամ անդադար կռիվ առաջացաւ դէպի գերմանացիները, 900 մետրի վրա պահեց մի փոքրիկ անտառում։ Զուրկների ձողերը օձերի նման սողացին դեռևի վրա, ճանապարհի կողքով։ Ձողերի բերաներին ամրացված էին հնդկական հակայական դանակներ։ Գիշերվայ մութ ֆոնի վրա նկատվում էին գերմանական պահակները, որոնք պաշտպանում էին ռազմամթերքը։ Կէս ժամ անցած, պահակները յանկարծ չքացան։ Զուրկների վաշտը սկսեց զգուշութեամբ շարժվել դէպի ռազմամթերքի տեղը։

Մի քանի բոպէից յետոյ, գետի միւս ափում գտնված գերմանական շտաբի օֆիցէրները տեսան, որ դէպի երկինք է բարձրանում կրակի հսկայական մի սիւն։ Տեղի ունեցաւ պայթիւն և գերմանական ամբողջ ռազմամթերքը յօդս ցնդեց։ Իրարանցման ժամանակ զուրկները աջողեցին անսկատելի կերպով թնդանօթակիրները վերադառնալ, որոնք նրանց եկա տարան։ Գերմանական հրետանին հարկադրված եղաւ փոխել իր դիրքը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՑՕԳՈՒՏ ՀԱՑ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

—

Ստացանք 1) Արաբէմ Մ. Սպարապետեանից («Թելա» համարները, Թիֆլիսում) 5 ր., 2) Մի ունից 25 ր.։ Նախորդ ստացվածների հետ միասին («Մշակ» № 250) ունենք ստացած ընդամենը 103 ր.։

ՑՕԳՈՒՏ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ

—

Ստացանք Թիֆլիսում մի ունից 25 ր.։ Նախորդ ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 238) ունենք ստացած ընդամենը 68 ր.։

ՑՕԳՈՒՏ ՎՆԱՍՎԱԾ ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ

—

Ստացանք Թիֆլիսում մի ունից 25 ր.։

ԿԱՑԷՆ, ՈՐԻ Է ՔՈ ԵՂԲԱՑՐ ԱԲԷԼԸ

(Նուիրում եմ իմ ծանօթ և անծանօթ հայերին, որ փախչում են զոհողութիւնից և կամ նուիրում են սակաւ)

—

— Ո՞ւր է քո եղբայր Աբէլը, Կայէն...

Ահա այն հարցը, որը տալու ենք մենք այսօր այն բոլոր հայերին, որոնք ներկայ պատմական մեր ճգնաժամին հանդիսատեսը եղան, հանդիսատ խղճով անտարբեր նայում են մեր ազգի տառապանքների վրա, անուշ ալօրվայ մեր ճգնաժամին ձեռնպահ են մնում և չեն շտապում օգնել մեր մեծ գործի իրականացմանը։

Նրանք Կայէններ են, Կայէններ թմրած, քնած խղճով, հրեշտակների փողերին ապաւինած...

Բայց նրանք մեր ազգի Կայէններ են, և մենք իրաւունք ունենք նրանցից հարցնելու՝

— Ո՞ւր են Աբէլները, ո՞ւր են ձեր եղբայրները, Կայէններ։

Ո՞ւր են։ Դուք չը գիտէք։ Լսեցէք, ես ձեզ պատմեմ։ Նրանք զնդանների մէջ են զուլումների աշխարհում։ Նրանք ջարդվում են, ոչխարների նման մորթվում այն անիծեալ երկրում, որը Թիւրքիա է անուանվում և որը մենք Հայաստան ենք ուզում դարձնել։ Նրանք մերկ են, ոտաբոբիկ, այս ցըրտերին ցնցոտիներով ծածկված։ Նրանց աչխատանքի պտուղները իրանց չեն պատկանում։ Պտուղ, կեանք, կին, զաւակ, բոլոր բան նրանցն է և նրանցը չէ։ Երբ Թիւրքը ցանկանայ, այդ բոլորը բանը—որի վրա դուք, սառնասրտեր, զղջում էք—հայը պիտի տայ Թիւրքին, ինքը պիտի քաշվի և լռէ. լռութիւնը շարունակվում է դարեր։ Այլ ևս համբերութիւն չը մնաց, այլ ևս սիրտ չը կայ լռելու։ Եւ ջարդը սկսվեց։ Մորթվում են հայերը Աբէլների նման, միայն նրա համար, որ նրանք աշխատաւորներ են և վաստակաւորներ, որովհետև նրանց զոհը ընդունելի է Աստուծուն։ Ինչու լռում էք, ինչու չէք շտապում օգնութեան և ինչու փախչում էք զոհողութիւնից։ Չէ, իրաւունք կայէններ էք։

Ո՞ւր են ուրեմն ձեր եղբայրները, հեզ Աբէլները մորթված, ջարդված, արիւնաքամ, որ դեռ հեռում են, կարօտ կեանքի և աղատութեան...

Հերթական հարց պիտի լինի հայերիս համար, թէ ի՞նչ դիրք բռնելու ենք հանդէպ այդ կայէնների։

Խօսեմ պարզ։

Մեծ Ռուսաստանը, որը մեզ հովանաւորել է, այժմ հարկաւորութիւն ունի, որ նրա բոլոր հպատակները մի մարմին, մի հոգի դարձած՝ օգնեն նրան։ Մեծ Ռուսաստանը փրկելու, ազատելու է Հայաստանը և տալու նրան բարենորոգումներ։ Հայաստանը կարող է ստանալ վերջապէս այն ինքնավարութիւնը, որին իրա դարեր հասած արիւնով, թափած արտասուքներով և հարիւր հազար նահատակ Աբէլներով արժանի է և ով այսօր այդ չէ հասկանում, նա Կայէն է, որը սպանում է իր եղբօրը՝ Աբէլին։

Պէտք է ցուցակներ կազմել. այդ ցուցակները ուղարկել ամեն մի հայ համայնք, հայ եկեղեցիներ։

Պէտք է անարգ սիւնին գամել Կայէններին։

Որ ողջ ազգը նրանց ճանաչէ, իմանայ։ Ճանաչէ, իմանայ և հարցնէ.

— Կայէններ, ո՞ւր են ձեր եղբայրներ Աբէլները, որ մորթվում էին, ջարդվում, մեռնում, խեղդվում զնդանների մէջ զուլումների թշուառ աշխարհում և ձեր աչքերի առաջ դեռ հեռում, փափագած՝ անհետացող կեանքին և հեռուից փայլող ազատութեան...

Ո՞ւր են Աբէլները, Կայէններ...

Խեղճ ազգի անգութ-սրիկայ Կայէններ...

Գր. Զալիանուշեան

ԴԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

✦ Այսօր Տիգ. Նազարեանի Գրական-Գեղագիտական Սալօնում տեղի կունենայ

Բերդը զոհեր է պահանջում, և այդ զոհերը այժմ թափված են նրա պարիսպների տակ, վիրաւորն ու մեռածն իրար խառնված արեան մէջ թաւալվելիս։

Բերդից աւելի՝ մարդկանց խօսակցութեան ու հիացմունքի առարկան էր այդ օրվայ հեռագիրների մէջ նկարագրված հերոս զինուորի մահը, որ ծածկված վէրքերով՝ թշնամուց խլած դրօշակով առաջինն է մտանում բերդը և արիւնաքամ ընկնում իր խլած դրօշակի մօտ և հոգին փչում։

Եւ հեռագրավաճառները բերդի հետ միասին, հերոս զինուորի համար էին կանչում։

— Հերոս զինուորը,—լսվեց մեր ծերուկի ձայնը. նա իր ձեռնափայտին կռթնած, քարշ տալով իր թոյլ ոտը, սրան ու նրան հրելով ճանապարհ էր բաց անում ամբոխի միջից, գոռում էր օրքան օյժ ունէր։ Քրտինքը ծորում էր նրա ճակատից, թափվում աչքերը, նա ցնցում էր գլուխը, ճչճպացնում աչքերն ու առաջ գնում անդադար «հեռագի՛ր» կանչելով։

Մի երկու ժամից յետոյ՝ նրա մօտ այլևս ոչ մի հատ հեռագիր չը մնաց։

Ցնվեց պատին, որ մի շունչ առնի. սրբեց ճակատի քրտինքը և այնպիսի կարօտ զգաց մէջքի վրա պառկելու... Ոչ ուտի, ոչ խմի. պառկի, անվերջ պառկի...

Նա քայլերն ուղղեց դէպի այն կողմը, որտեղ կինն էր նստում լրագիրների մօտ... Ցանկարծ նա ժպտաց, յիշեց փողերը, ձեռքը տարաւ ու խառնեց արծաթն ու պղինձը, որոնք անուշ զնգում էին պայուսակի մէջ։ Նա ժպտաց. գոհ էր, ինքը այլևս անգործ, ձրիակերի մէկը չէ, որ ընկած տանը՝ կնոջ աշխատանքն էլ չէ խժռում։ Նայեց այդ քրտինքի աշխատանքին և ուրախ սրտով օյժ տուեց յոգնած օտաներին։

Հասնելով անկիւնը նա զարմացած նկատեց, որ ոչ կինը կար, ոչ աղջիկը։

Մի քիչ էլ վախեցաւ, թէ ինչ կարող է պատահած լինել, որ այսպիսի օր, երբ լրագիրները իրար ձեռքից են խլում, թողել են ու գնացել։

— Գուցէ վերջացել է... բոլորը ծախել ու գնացել է։

Բայց այդ ենթադրութիւնը անհաւատալի թւաց. երբէք այդպիսի դէպք չէր պատահել։

Նա՝ որքան կարող էր՝ արագացրեց քայլերը, քարշ տալով աջ ոտը, իսկ աջ ձեռքը թոյլ-թոյլ կարծես անդիտակցաբար դէս ու դէն էր ընկնում։

Նա դեռ հեռուից նկատեց ինչ-որ անսովոր իրարանցում իրանց ընակարանի առջև։

Հաւաքվել էին մարդիկ, կանայք, երեխաներ...

Մի քիչ էլ որ մօտեցաւ, պկանջին լացի ձայն հասաւ։

Տուն մտաւ... Երկար ոչինչ չէր հասկանում։ Կինը լալիս էր. աղջիկը կպել էր մօրը և լալիս էր ողկոյզուր. կինը նկատելով նրան՝ լալով ինչ-որ ասաց, բայց նա ոչինչ չը հասկացաւ։

— Ափսոս, ափսոս տղայ։

— Կուրանայ նրա մայրը,—ծնկանը տալով լալիս ու ասում էր մի պառաւ կին։

— Թագաւորից պարգև կը գայ։

Լսում էր ծերուկը իր շուրջը այդ կցկտուր ու անմիտ նախադասութիւնները, բայց ոչինչ չէր ըմբռնում. ուզում են ափսոսում, ուզում համար է թագաւորից պարգև գալու։

Նա քարացել էր տեղում. ուղեղը կարծես դադարել գործելուց և չէր կարողանում մի բան ասել։

— Ի՞նչ է եղել,—վերջապէս կարողացաւ հարցնել նա մօտը կանգնած մէկին, որը նրա հարևանն էր, բայց օրին նա չը ճանաչեց։—Ի՞նչ է պատահել,—կրկնեց նա իր հարցը։

Առանց պատասխանելու նրա հարցին, այդ մարդը լուռ բռնեց նրա ձեռքը ու պինդ սեղմում էր ու բաց չէր թողնում... նրա աչքերը արցունքներով էին լիքը։

— Ինչո՞ւ ես ձեռքս հուպ տալիս,—աշխատելով ազատվել նրանից՝ շշնջաց ծերուկը։

— Աստուծոյ կամքն է,—արցունքները կուլ տալով կմկմաց հարևանը։—Մխիթարվիր, տղայ անմահացաւ. նրա անունը այժմ ամբողջ աշխարհի բերանին է։

— Ինչե՞ր ես խօսում, այ մարդ, մի բան ասա... Սիրտս ճաքեց... Նամա՞կ էք ստացել, ի՞նչ է պատահել բալիս,—ճչաց նա ամբողջ մարմնով դողալով ինչպէս տենդից։

— Խեղճ մարդ, բա չիմացա՞ր... ողջ քաղաքը գիտէ... տղաղ ընկել է, ընկել է հերոսի պէս... Ծախում էիր, գովում, բոլորին դու էիր յայտնում, ու ինքդ չը գիտէիր, որ էդ հերոսը քո որդին էր։

— Իմ որդին... որդին...

Ուրեմն նա նրա գովքն էր այնպէս բարձրաձայն փողոցներում մարդկանց յայտնում, իր որդու քաջագործութիւնն էր գովում, իր որդու մահվան լուրն էր ճչալով հաղորդում մարդկանց...

Մի բան հեծկլտանքի նման բարձրացաւ դէպի նրա կոկորդը... Դունատվեց մեռելի նման։ Օրօրվելով յենվեց կողքին կանգնած մարդուն. դէմքի մկանները կարծես պար էին բռնել երեսի վրա. ուզում էր լալ, ուզում էր գոռալ, ուզում էր մի բան ասել, բայց լեզուն փալասի նման անշարժ ընկած էր բերանում։

Աչքերը սառել էին։ Մի քանի անգամ նա բաց ու խուփ արաւ բերանը՝ ինչպէս ջրից դուրս շպրտված ձուկը, ցնցվեց ու երեսի վրա փռվեց գետին։

— Ջուր,—կանչեց մօտը կանգնած մարդը...

Բայց նա արդէն մեռած էր։

Միք. Մանուէլեան

Արդէն երկու շաբաթ է, որ հայը, մայրը և աղջիկ այդ տենդային աշխատանքով են զբաղված։ Կինը ամբողջապէս տարված էր այդ գործով։ Հեռագիրները դուրս գալուց մի երկու ժամ առաջ նա կանգնած էր տպարանի առաջ, որ առաջինը իրանք կանչեն՝

— Նոր հեռագիրնե՞ր...

Ամուսնու վախը միանգամայն զուր էր. նրանց գործը այնքան աջող էր գնում, որ նա թողեց անգամ տներում լուացք անելը և ամբողջապէս նուիրվեց այդ գործին։

Կինն ու աղջիկը մինչև մուրթն ընկնելը փողոցումն էին։ Մուրթն ընկնելուց յետոյ բոլորը յանձնում էին ծերուկին, որը մնում էր դուրսը մինչև ուշ գիշեր։

Առաւօտները նրանք շատ վեր էին կենում, ոտի վրա մի կտոր բան ուտում, մի բաժակ թէյ խմում և շտապում փողոց։

Այդ անհանգիստ գործի մէջ նրանք կարծես մոռացել էին իրանց կսկիծը. ամբողջ օրը անցնում էր, նրանք ժամանակ չունէին մտածելու և տխրելու։

Բայց գիշերները երբ յոգնած պառկում էին, երկար ժամանակ քունը մօտ չէր գալիս նրանց աչքերին, և մէկը միւսից ծանր լալիս էր։

Երբեմն ամբողջ գիշերները արթուն էին լուացնում, վախեցած՝ իրար երազները պատմում։ Երբեմն էլ այնպիսի անհանգիստ, ծանր, ճնշող երազներով մի քուն էր գալիս վրաները, որ առաւօտեան զարթնում էին ջարդված, տրորված, կարծես չէին էլ հանգստացել։

—

Վաղուց է, որ նրանք ոչ մի լուր չունէին որդուց։

Երբ դեռ նոր էր գնացել, մի քանի նամակ գրեց։ Իսկ վերջին նամակից յետոյ 2 ամիս էր անցել, և ոչ մի լուր..., ո՞ւր է... մեռա՞ծ է թէ կենդանի... ոչինչ չը գիտէին։

II

Մի քանի բոպէում ամբողջ քաղաքը զարդարվեց դրօշակներով։ Ամեն կողմից լսվում էր զանգակների զողանջը։

Մարդիկ դուրս թափվեցին տներից, լրագրավաճառների ձայները լսվում էին քաղաքի բոլոր թաղամասերում այնպէս ուժեղ, որ ակամայ կանգ էիր առնում վախեցած ու նեարդային։

Թւում էր, թէ քաղաքը այրվում է և մարդիկ ցնորված դէս ու դէն են վազվզում։

Փողոցները լիքն են բազմութեամբ, բոլորի դէմքին էլ ժպիտ է երևում։

— Նոր հեռագրերը... թշնամու բանակը ջարդվել է... մերոնք վերցրել են բերդը... Հերոս զինուորը...,—լսվում էր ամեն կողմից հեռագրավաճառների ձայնը այդ խառնիճաղանճ ամբոխի միջից, որը փեթակից դուրս եկած մեղուների նման լցրել էր չորս կողմը։

Կառք, օտոմոբիլ, տրամվայ, ուրաներ, զանգեր, բոլորը իրար են խառնվել՝ ներկայացնելով մի արտակարգ ժխոր։

Ամեն մի հեռագրավաճառ աշխատում է առաջ վազել, աւելի ամուր կանչել. ամբողջապէս քրտինքի մէջ են, խաղտած ձայնով, արագ՝ մէկ գնողից միւսին են վազում անընդհատ «հեռագրերնե՛ր, հեռագրերնե՛ր» կանչելով։ Հեռագրերը իրար ձեռքից են խլում։ Մի մեծ յաղթութիւն է աւետում այդ օրվայ հեռագիրը, թշնամուց տասնեակ հազարներով զոհեր են եղել...

Մարդիկ ժպտում են, ուրախ են, որ այդքան շատ մարդ է ջարդվել թշնամուց։

Այդ բոպէին նրանց մտքովն էլ չէր անցնում, որ գուցէ մի այդքան էլ, կամ գուցէ աւելի, իրանցից են մնացել բերդի պարիսպների տակ՝ բերդը վերցնելիս... այդ բոլորը ոչինչ. բերդը վերցված է։

Թող հարիւր հազարաւոր մարդիկ զոհ գնան բերդին։

Բերդը զոհեր է պահանջում, և այդ զոհերը այժմ թափված են նրա պարիսպների տակ, վիրաւորն ու մեռածն իրար խառնված արեան մէջ թաւալվելիս։

Բերդից աւելի՝ մարդկանց խօսակցութեան ու հիացմունքի առարկան էր այդ օրվայ հեռագիրների մէջ նկարագրված հերոս զինուորի մահը, որ ծածկված վէրքերով՝ թշնամուց խլած դրօշակով առաջինն է մտանում բերդը և արիւնաքամ ընկնում իր խլած դրօշակի մօտ և հոգին փչում։

Եւ հեռագրավաճառները բերդի հետ միասին, հերոս զինուորի համար էին կանչում։

— Հերոս զինուորը,—լսվեց մեր ծերուկի ձայնը. նա իր ձեռնափայտին կռթնած, քարշ տալով իր թոյլ ոտը, սրան ու նրան հրելով ճանապարհ էր բաց անում ամբոխի միջից, գոռում էր օրքան օյժ ունէր։ Քրտինքը ծորում էր նրա ճակատից, թափվում աչքերը, նա ցնցում էր գլուխը, ճչճպացնում աչքերն ու առաջ գնում անդադար «հեռագի՛ր» կանչելով։

Մի երկու ժամից յետոյ՝ նրա մօտ այլևս ոչ մի հատ հեռագիր չը մնաց։

Ցնվեց պատին, որ մի շունչ առնի. սրբեց ճակատի քրտինքը և այնպիսի կարօտ զգաց մէջքի վրա պառկելու... Ոչ ուտի, ոչ խմի. պառկի, անվերջ պառկի...

Նա քայլերն ուղղեց դէպի այն կողմը, որտեղ կինն էր նստում լրագիրների մօտ... Ցանկարծ նա ժպտաց, յիշեց փողերը, ձեռքը տարաւ ու խառնեց արծաթն ու պղինձը, որոնք անուշ զնգում էին պայուսակի մէջ։ Նա ժպտաց. գոհ էր, ինքը այլևս անգործ, ձրիակերի մէկը չէ, որ ընկած տանը՝ կնոջ աշխատանքն էլ չէ խժռում։ Նայեց այդ քրտինքի աշխատանքին և ուրախ սրտով օյժ տուեց յոգնած օտաներին։

Հասնելով անկիւնը նա զարմացած նկատեց, որ ոչ կինը կար, ոչ աղջիկը։

«Հայոց հարցի» քննութեան շարունակութիւնը։

◆ Մօտ օրերս, պատերազմից վնասուածների օգտին Թիֆլիսում «Ծխախոտի օր» է կազմակերպվելու։ Հաւաքվելու են գլխաւորապէս ծխախոտ և պապիրոսներ։

◆ Կովկասի քաղաքների միութեան բիւրոյի լիազօրը առանձին մի խորհրդակցութեան քննութեան է ներկայացրել մի առաջարկութիւն այն մասին, որպէս զի վիրաւորներ բերող սանիտարական գնացքները հնարաւորութեան չափ նշանակած ժամին տեղ հասնեն։ Այդ գնացքներին սպասելը քաղաքին թանգ է նստում։

◆ Նահանգապետը թոյլատրել է Թիֆլիսի արհեստաւորաց վարչութեանը՝ Թիֆլիսի արհեստանոցում տուփեր կախել կամաւոր նուիրաբերութիւնների համար։ Հաւաքված նուիրաբերութիւնները յատկացվելու են պահեստների ընտանիքների օգտին։

◆ Ժողովրդական Տանը կից եղած ուկրայնցիների դրամատիկական միութեան վարչութիւնը, նահանգապետի թոյլատրութեամբ, նոյեմբերի 14-ին, մի ներկայացում է տալու պատերազմից վնասվածներին օգնող քաղ. կոմիտէի օգտին։

◆ Կովկասի քաղաքների միութեան բիւրոն իշխ. Վաչնաձէին ուղարկում է Թէլաւի և Սղնախի գաւառները, «մամուլի օրը» հաւաքված միջոցներով զօրականների համար տաք իրեր գնելու։

◆ Գեղարուեստը խրախուսող կովկ. ընկ. կազմում է վիճակախաղ գեղարուեստական աշխատութիւնների, յօգուտ վիրաւոր զինուորների։ Այս նպատակով ընծայել են իրանց երկերը արուեստագէտներ Բաշինջաղեան, Բոնդար, Գրինեվսկի, Զանկովսկի, Զախարով, Նիկոլաձէ, Պատկանեան, Սկլիֆոսովսկի, Թադէոսեան, Ֆոգել, Խոդոբովէց, Շմերլինգ և ուրիշներ։ Ցիշնալ գեղարուեստական գործերի մի մասը տեղաւորված է Արքունական թատրոնի ֆոյէում, ուր և վաճառվում են վիճակախաղի տոմսակները մի մի ռուբլով։ Վիճակախաղից գոյանալու է 1000 ռ.։

◆ «Մամուլի օրը» ստացվել է 4398 ռ. 86 կ. եկամուտ։ Թերթերում տպված յայտարարութիւններից սպասվում է 300 ռ.։

◆ Ստացանք «Տարազ» հանդէսի № 6-ը։ Թերթի այս №-ը կազմված է բովանդակալից և շքեղ։ Կան մի շարք յօդուածներ։ Տպված է հրեայ գրող Շոլոմ Ասշի «Դէպի Սիօն» պիէսի շարունակութիւնը։ Կան բազմաթիւ պատկերներ ներկայ հաւերօպական պատերազմի տեսարաններից, աւերված քաղաքներից։ Տպված են կռուող պետութիւնների իշխանաւորների և պատերազմի հերոսների պատկերները։ Փոքրիկ յօդուածներ կան Լերմոնտովի և Լոպատինսկիի յօբելեանների մասին՝ պատկերներով։ Զետեղված են Ս. Զաւարեանի, Ալ. Քալանթարի, Կոնստ. Խատիսեանի պատկերները սրանց մահվան տարեդարձի առիթով։ Կան ուրիշ պատկերներ։

◆ Վաղը, շաբաթ, երեկոյեան ժ. 8-ին, Հասարակական ակումբում (Գրիբոյեդովսկայա № 22) կը տօնվի Թիֆլիսի նահանգի գիւղացիութեան ազատագրութեան 50-ամեակի յօբելեանը։ Ռեֆերատներ կը կարդան Գ. Վ. Զերցալով և իշխ. Գ. Մ. Թումանեան։

◆ Թիֆլիսի բօրսային արտէլի վարչութիւնը դիմել է նահանգապետին, խնդրելով թոյլատրել Թիֆլիսում փոխատու գանձարան բանալ։

◆ Ներկայ անցքերի մասին սուտ լուրեր տարածելուն համար Մէյեր-Սրօվ Շաեվիչ Ցել 1000 ռուբլի տուգանքի է ենթարկվել նահանգապետի կողմից։

◆ Ներկայումս Թիֆլիսումն է գտնվում Բագուի քաղաքագլուխ Լ. Լ. Բիչը։

◆ Նոյեմբերի վերջերին Կախէթի երկաթուղու համար սպասվում են 10 վագոն զանազան կարգի։ Այդ գծի վրա երթևեկութիւնը դէպի Գուրջաանի կը սկսվի այս օրերս։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԻՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Ցօգուտ վիրաց թատրոնական շինութեան ֆօնդի մինչև նոյեմբերի 2-ը հաւաքված է 1341 ռուբլի։

◆ Վիրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեանը հատած վնասը, որ առաջացել էր թատրոնական շինութեան մէջ տեղի ունեցած հրդեհից, հասնում է 21,547 ռուբլու։

◆ «Թեմքի» ասելով, Թիֆլիսում և Քութայիսում վրաց ժողովրդից կազմված է կամաւորների զօրախումբ, որոնցից ձիաւոր 250 հոգի է, իսկ հետևակ 1000։

◆ «Ակ. Ազրբի» ասելով, Քութայիսի կամաւորների գլխաւոր է նշանակված աղնուականութեան պարագլուխ իշխ. Դ. Նիժարաձէ։

◆ Նոյն լրագրում Քութայիսի քաղաքագլխի անունով տպված է Մոսկվայի վրաց ուսանողութեան հետևեալ հեռագիրը.

«Մոսկվայի վրաց ուսանողութիւնը, Անդրկովկասում ծագած պատերազմի առիթով, որոշել է վերադառնալ հայրենիք, որպէս զի իր ամբողջ ոյժը գործադրէ պատերազմում վիրաւորված զինուորականներին օգնելու գործում»։

◆ Նովոչէրկասկի վրաց ուսանողութիւնը իր վրա վերցնելով այնտեղ պատերազմի բեմից բերված վիրաւոր վրաց զինուորների մասին հոգալը՝ տպել է վրաց լրագիրների մէջ նրանց ցուցակը և ուսանող Անտ. Զախարիձէի բերանով կոչ է անում վրաց հասարակութեանը ուղարկել ամսագիրներ, լրագիրներ վիրաւոր զինուորների ընթերցանութեան համար։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպէրա

Նոյեմբերի 5-ին ռուսաց օպէրային խումբը կրկնեց «Искатели жемчуга» օպէրան։ Մասնակցում էին տ. Սաբօստինան, պ. պ. Զալեվսկին, Զալիպսկին։

Ապա եղաւ բալէտային դիվերտիսմենտ, որի մէջ աչքի ընկան տ. Բաուէրզակս և Վակարէց։

Այսօր կը կրկնվի «Սէվիլեան սափրիչը»։

ՄԱՄՈՒԼ

«НОВ. ВРЕМЯ»-Ն ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Нов. Вр.»-ն հոկտ. 23-ի №-ում խօսելով Ռուսաստանի, Թիւրքերի և հայերի մասին՝ հետևեալն է ասում.

Ինչպէս հաղորդում է հեռագիրը, Թիֆլիսում փոխարքայի կողմից ընդունվել է նշանաւոր ռուսահայերի մի պատգամաւորութիւն, եպիսկոպոսի գլխաւորութեամբ։ Այդ պատգամաւորութիւնը ներկայացել է նրա համար, որպէսզի արտայայտի հայ ժողովրդին ոգևորող զգացումները այն մօթենտին, երբ Հայաստանը նորից արիւնահեղ ընդհարումների ասպարէզ է դարձել։ Պատգամաւորութեան գլուխը վկայել է, որ «հայերը բաղդաւոր են զոհաբերել իրանց կեանքը և կարողութիւնը մեծ Ռուսաստանի բարօրութեան համար»։ «Մի միտք, մի զգացում է միացնում հայերին։ Թող Տէրը յաղթութիւն պարգևի ռուսական զէնքին»։ Պէտք է անտես առնել ռուս-թիւրքական և ռուս-հայկական վերջին 10-ամեակի յարաբերութիւնների պատմութիւնը նրա համար, որպէսզի կարելի լինի կասկածել այստեղ բերված խօսքերի կատարեալ անկեղծութեան մէջ։

Ամենքին, ով փոքր ի շատ ծանօթ է արևելեան հարցին, լաւ յայտնի է, որ հայերը Ռուսաստանին նայում են այնպէս, ինչպէս իրանց՝ Թիւրքաց լծից ընական ազատարար վրա։ Ապագան անյայտ է. առաջ չը գնանք։ Բայց մենք կը կամենայինք ուշադրութիւն դարձնել մի՝ համեմատաբար փոքր հարցի վրա, որի լուծումը արդէն և այժմ կարող կը լինի արիւնթիւն ներշնչել տանջված հայ ժողովրդի սրտին։ Մենք ի նկատի ունենք Ռուսաստանում ապրող Թիւրքահայերին։ Ինչպէս յայտնի է, կարգադրութիւն է արված այն մասին, որպէսզի մի շաբաթվայ ընթացքում Թիւրքերը թողնեն Ռուսաստանի սահմանները։ Կը տարածվի արդեօք այս հրամանը Թիւրքահայերի վրա, թէ աւստրիական չեխերի և Պոզնանի լեհերի օրինակով նրանց թոյլ կը տրվի մնալ Ռուսաստանի սահմաններում։ Ինչպէս յայտնի է, հայերին արդէն թոյլատրված է մնալ Ռուսաստանում։ Եւ եթէ մի քանի ծայրագաւառում գործադրվեց հրամանը, այդ էլ Թիւրիմացութեան արդիւնք էր։

*

«Н. В.»-ի նոյն համարում Մ. Մենշիկովը, որ յայտնի է իր դէպի հայերը ունեցած վերաբերմունքով և երկար տարիներ հայերի դէմ յօդուածներ է տպել, այժմ գրում է.

Պատերազմի յայտարարութիւնը ամենից առաջ խանդավառութիւն առաջ բերեց հայ երիտասարդութեան մէջ, որոնք շտապեցին կամաւորներ գրվել։ Այդ միանգամայն հասկանալի է։ Թիւրքիայի հետ կատարվող ներկայ պատերազմը հին հայկական ժողովրդին խոստանում է իր նուիրական երազի կատարումը՝ ազատութիւն Թիւրքական լծից։ Ինձ թւում է, թէ Ռուսաստանը կարող կը լինէր պատերազմի սկզբում կատարեալ պարզորոշութեամբ դնել և այդ նպատակը, ինչպէս Թիւրքերի արտաքսումը Եւրոպայից։ Հայ ժողովուրդը իր ամբողջութեամբ՝ քրիստոնեայ նահատակ է։ Ընդունելով Քրիստոսի վարդապետութիւնը շատ դարեր առաջ, քան արևմտեան և արևելեան եւրոպացիները, հայերը մինչև այժմ գտնվում են պատմական դրութեան մէջ, որ մօտ է Ներօնի և Դիոկղետիանոսի ժամանակաշրջանին։ Մինչև այժմ նրանց քրիստոնէութիւնը համարվում է յանցանք, և ժամանակ առ ժամանակ կռապաշտ իշխանութիւնը հայերին գլխովին ջարդի է ենթարկում։ Կարելի է անհամակրութեամբ վերաբերվել հայերի աղգային բնաւորութեան մի քանի գծերին—կիսատանջ ժողովուրդների բնաւորութիւնը ընդհանրապէս չէ կարող բաղդաւոր լինել—բայց հանդուրժել մի ամբողջ ցեղի սարկացմանը, ինձ թւում է, չի համապատասխանի Ռուսաստանի արժանապատուութեանը։

Հայաստանը պէտք է ազատ լինի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՂԷՏՆԵՐԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅ ԳՐԱԿԱՆԱԳԷՏՆԵՐԻ ԿՈՉ

Թիֆլիս, 5 նոյեմբերի

Ներկայ համաեւրօպական աշխարհասասան մեծ պատերազմի անխուսափելի և բազմապիսի աղէտներից վնասվածներին նիւթական օգնութիւն հասցնելու համար՝ պատերազմող երկիրների կառավարութիւնները, քաղաքային ու հասարակական կազմակերպութիւնները կոչ են անում իրանց ժողովուրդներին համազգային, համաժողովրդական այժերով օգնութեան հասնել այդ մարդասիրական և վեհ գործին։ Մեր մեծ հայրենիքում, փառաւոր Ռուսաստանում նոյնպիսի նպատակի համար ամենուրեք ժողովարարութիւններ են լինում, ազգաբնակութեան բոլոր խաւերից օժանդակութիւն սպասելով։ Թիֆլիսի հայ գրողների, բանասէրների, ժուրնալիստների և արուեստագէտների մի խումբ, չուզելով անտարբեր մնալ այս գործում, միտք յղացաւ հրատարակել հայերէն լեզուով մի գրական, բանասիրական և գեղարուեստական շքեղ ժողովածու և նրա վաճառումից գոյացած ամբողջական արդիւնքը յատկացնել վերոյիշեալ նպատակին, հայրենի Կովկասում։ Ահա այդ գրականագէտները և արուեստագէտները, երկու նիստ գումարելով ժողովածուի հրատարակութեան խնդրի առիթով, իրանց կողմից ընտրեցին մի յանձնաժողով՝ այդ գործը գլուխ բերելու համար, ցանկութիւն յայտնելով նոյնպէս որ ժողովածուին աշխատակցութեան հրաւիրվեն մեր բոլոր յայտնի գրողները, բանասէրները, հրապարակախօսները, ժուրնալիստները և գեղարուեստագէտները։

Հրատարակելիք ժողովածուն նիւթական օգնութիւն հասցնելուց բացի՝ ունի մի երկրորդ նպատակ, այն է՝ որ նա մեր յաջորդ սերունդների համար կը ներկայանայ մի մնայուն յիշատակարան անմոռանալի պահելու ներկայ պատմական ժամանակաշրջանը և մեծ պատերազմը և նրա հետ կապված այն լուրջ հարցերն ու խնդիրները, որոնք կարող են նիւթ ծառայել ապագայի համար։

Աւելի ևս թիւրքահայ ազգային-քաղաքական կեանքի այս երկունքի տարում ի մի հաւաքել անխիթար բոլոր մեր մտաւոր ոյժերին իրանց ժամանակակից տրամադրութեամբ և գրչի արդիւնքներով։

Ցանձնաժողովս դիմելով հայ գրողներին, բանասէրներին և ժուրնալիստներին հրաւիրում է աշխատակցել մեր հրատարակելի ժողովածուին, խոնարհաբար խնդրելով նոյնպէս՝ մասնակցութեան մասին օր առաջ յայտնել մեզ՝ նիւթն էլ ուղարկելով ոչ ուշ քան առաջիկայ յունվարի սկիզբը։

Նախ. յանձնաժողովի՝ Հ. Առաքելեան

Անդամներ՝ Ակուտեան Յովհաննէս, Բաշինջաղեան Գէորգ, Գալստեան Գալուստ, Եղեկեան Աւետիք, Մալխասեան Յովհաննէս, Նազարեան Տիգրան, Շիրվանզադէ, Սպէնդիարեան Յովհաննէս, Սօլօվեան Յովակիմ, Ֆէթվաճեան Արշակ

Անդամ-քարտուղար՝ Գարեգին Լևոնեան

Ցանձնաժողովի հասցէն.—Тифлисъ, почт. ящ. № 27.

ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿ. ԿՈՂՄԻՑ

Քաղաքացիներ,

Ռուս ժողովուրդը ամենայն պատրաստակամութեամբ օգնութեան է հասնում իր եղբայրներին, որոնք կռուում են Ռուսաստանի արևմտեան սահմանում։ Մէկը միւսի ետևից հիմնվում են լազարէթներ, սննդական կէտեր։ Պետրոգրադից, Մոսկվայից և միւս քաղաքներից ռազմաբեմ են ուղարկվում գնացքներ՝ հագուստներով և սպիտակեղէնով։

Բայց դեռ չը կարողացաւ խաղաղ Ռուսաստանը իր բոլոր ոյժերը լարել արևմտեան պատերազմի զոհերի օգնութեան գործում, երբ բռնկեց պատերազմական նոր հրդեհ Արևելքում։ Եթէ ոչ այսօր՝ վաղը կը ծաւալվեն ռազմական գործողութիւնները Սև ծովի ափերում և Թիւրքական սահմանում։

Էլ աւելի զրկանքներ բաժին կընկնեն այնտեղ մեր զինուորներին, որոնք պէտք է կռուեն հեռաւոր, վայրենի երկրում, տանելով տեղական ընական պայմանների դժուարութիւնները։

Անհրաժեշտ է նախօրօք անել մեզանից կախվածը՝ օգնութեան գործի համար։

Դրա հետ միաժամանակ, մենք չը պէտք մոռանանք, որ Անդրկովկասի ժողովուրդներին սպառնում են գուցէ աւելի մեծ փորձութիւններ, քան այն ամենը, ինչ որ ապրում է հերոսական Բէլգիան և Լեհաստանի քայքայված ազգաբնակութիւնը։

Կայսերական ազատ տնտեսական ընկերութիւնը իր վրա է վերցնում նոր ռազմաբեմում գործող բանակի ետևը սննդական կէտեր կազմելու նախաձեռնութիւնը, որովհետև դրանց անհրաժեշտութիւնը՝ առաջին հերթին՝ ապացուցանում է պատերազմի 3 ամսվայ փորձը։ Այնուհետև, եթէ հաւաքվի միջոցների բաւականաչափ քանակութիւն, Կայսերական ազատ տնտեսական ընկ. կը ձեռնարկի ուրիշ նոր տեսակի օգնութիւն պատերազմի զոհերի համար։

Իր վրա վերցրած նպատակները կատարելու համար Կայսերական ազատ տնտեսական ընկ. մտադիր է սննդական կէտերի վայրերը ուղարկել իր լիազօրներին, նոյնպէս յարաբերութեան մէջ մտնել տեղական հասարակական կազմակերպութիւնների հետ, որոնք նոյն նպատակներն ունեն։

Նուիրաբերութիւններն ընդունվում են Կայսերական ազատ տնտեսական ընկ. շէնքում՝ Петроградъ, Забалканскій, 33. (Тел. № 21—19)։

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 6 նոյեմբերի

Ներփակեալ ուղարկում եմ 75 ռ.։ Ընդդեմ եմ 25 ռուբլին մացնէք հայ կամաւորների օգտին, 25 ռուբլին վնասված թիւրքահայերի օգտին, իսկ մնացած 25 ռուբլին պատերազմից վնասված զինուորների ընտանիքների օգտին։

Խոստանում եմ դեկտեմբերի 1-ից իւրաքանչիւր ամիս մինչև պատերազմի վերջը վճարել 30 ռուբլի, այն է ամեն մէկին 10-ական ռուբլի։ Մի ոմն

ՖԷԼԻԷՏՕՆ

ԳԵՐԲՆԱԿԱՆ ՄԵԾ ՏԵՒՏՕՆԸ

(«Ներկարարի» անտիպ յիշատակարանից)

Փորձ է սա կենսագրական, թէ մի քնութիւն ուսումնասիրական, ինքս էլ չը գիտեմ։

Ներկարար

Գլ. Գ.

Թէ Վիլհելմ կայզերը մի բարի պտուղ չէ, այդ արդէն հանրածանօթ է և անվիճելի։

Անվիճելի է, որովհետև աչքիր ունենք մարմնի և հոգու, կուրանալ չենք կարող... Էնվէրի պէս։

Ս. Գիրքը ասում է.

«Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա»։

Եւ համոզվում ենք, որ իսկապէս՝

«Ծառ չար ոչ կարէ պտղից բարի առնել»։

Կայզերի բերած թունաւոր պտղից միայն սպանիչ թոյն կարելի է ստանալ և անփախուստ մահ։

Նրա մահացու պտղի աւերածութեան սահմանները չափելու համար այսօրվայ աշխարհը մի չափ չէ գտնում համեմատական, որովհետև բոլոր եղած չափերը կարճ են գալիս... թէ քաղաքակրթական, թէ բարբարոսական։

Անգութ գործողութեանն ևս մի յարմար ու պատշաճ անուն են ուզում գտնել, սակայն սկսած Կայէնից մինչև Կալիշի տեսոն մայեօր Պրէյսներն ու Վանի Զեվդէտ-բէյվալին, բոլորն էլ պակասաւոր են դուրս գալիս ու ոչ սաղական։

Դա իսկապէս մի եղբօր սպանութիւն չէ, որ ասեն՝ կայէնութիւն։

Դա վայրենու սովորական գործ, աւերմունք չէ, որ կոչեն բարբարոսութիւն։

Լենգթէմօրը... ու կայզեր... թիւ համեմատութիւն. ուր զարափափա մի տգէտ, ուր թագաւորդ, ուսեալ իւնկեր ռազմագէտ։

Ցուղայութիւն։

Եթէ կայզերը իրան անուանում է առաքեալ, դա նրա կողմից մի մեծ թիւրիմացութիւն է. ճիշդ է, Ցուդան էլ էր առաքեալ, բայց երբ Քրիստոսին մատնեց, խաչն էլ գնաց իրան կախեց։

Իսկ կայզերը ամբողջ մարդկութեան մի թոկից կախելու է պատրաստ։

Կայզերը կարող է իրան և մեծ մահտեսի հրատարակել, որովհետև Երուսաղէմ ուխտի գնաց. բայց Քրիստոսին յարգող ոչ մի մահտեսի սուրբ գերեզմանի մօտից շնորհաւորական հեռագիր չէր տայ Կարմիր Համիդին, և այդ այն ժամանակ, երբ Սասունի արիւնոտ ծերպերից հազարաւոր անդէն զիւղացիների այրվող մարմինների ծուխն էր բարձրանում երկնքին բողոքելու, երբ անպաշտպան մայրերը զաւակներ կրծքերին սեղմած՝ վայր նետվում, միակ փրկութիւն անդունդների գրկերումն էին գտնում։ Ո՞ր տարդ մահտեսին, մաշալին ու հաջին ընդունակ կը լինէր այդչափ անգութ տեսարանութեան։

Ասում են, այդ գործում այնքան կարմիր տեսնութիւնը չէր մեղաւոր, որքան քաղաքական շահերը, Բաղդադի երկաթուղու փորացաւը։

Իսկ ինչ անուն տալ գիտութեան և հին սրբութիւնների դէմ նրա մղող պատերազմին, Վիլհէլմ մեծ այսահարի այսօրվայ համաշխարհային այս խայտառակ պատերազմին։

Անմահութեան ցաւին, թէ ախտին ենթարկված պատմական Հերոստրատն՝ անգամ իր խելառութեամբ՝ Վիլհէլմի այսահար մեծութեան առաջ, կուչ գալով, փոքրանում, հիպնոզի տակ գործող մի ողորմելի... Թիւրքիա է դառնում։

Որովհետև ցաւագար հիւանդ Հերոստրատը Եփեսոսի Դիանա աստուածուհու մի մեհեանը այրեց միայն, որ հին աշխարհի 70 հրաշալիքներից մէկն էր համարվում, սակայն այսահար մեծ տեսոնը չը բաւականացաւ գիտութեան, գեղարուեստի թանգարժէք տաճարներով, նա նոր աշխարհի 8-րդ հրաշակերտի հետ իր Կարմիր Խաչով ապահովված 200 վիրաւոր զինուորներին էլ չը խնայեց ոմբակոծելու։

Թողնենք խելառ Հերոստրատը, նոյն իսկ սոսկալի ժանտախտը չէ համարձակվել երբէք Բէյրութի և Պարիզի քրիստոնէական հին հրաշակերտներին մօտենալու, ուր մնաց թէ այսահար կայզերի անարգ աւերածութիւնը կատարելու... Ներօնից վատթար։

Իսրայէլ Խոջամիր

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Գուկիա, Զօրոնցօվի արձանի հանդէպ)

Սմենս or, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴՅԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վենէրական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Գ. ԱԶԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ղղային և երիխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏՅԵԱՆ—12—1 ժ. երեք. հինգշ. և շաբաթ. երիխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։

ԳԻՆ-Բ.ԺԻՇԿ ՅԷՐ-ԳԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Զրաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—105

Ատամաբուժարան

Հիմնված ատամնաբոյժ

Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ

նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլովսկի պր. № 76

Բուժարանը բաց է հիանդների համար օրվայ ոչ գիշերվայ ամեն ժամին։ Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը ստացվում է ըստ հաստատված սակագնի։

Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Բ. Բ. Գիրգոյվը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։

Բուժարանն ունի կատարելագործված լաբորատօրիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամ ճա-տեխնիկական աշխատանքներ և շտապ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում։

(օ. մ.) 755. 100—41

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ ինտելիգենտ ընտանիքում

առաջարկում են մեծ կահաւորված սենեակ բոլոր յարմարութիւններով և ընդունում են աշակերտներ իբրև պանսիոնէր։ Նոյն տեղ Ֆրանսիայի համալսարանի նախկին ուսանող տալիս է դասեր բոլոր միջնակարգ դպրոցների առարկաներից։

Ելիզավետինսկայա փ. № 84, բնակ. 3.
982. 1—1

ՄԻ ՓՈՐՁՎԱԾ

ՎԱՐԺՈՒՀԻ

տալիս է ֆրանսերէնի և գերմաներէնի դասեր։ Հասցէն Кирпичный пер. № 11, ներքնայարկ։
981. 3—9

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրթանէս, I և II հատորներ . . . . 1 ռ. 50
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի 40
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ. . . . 1 ռ. 20
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Ար. Մխիթարեանի 40
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ 15
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի 50
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէկեանի . . . . 1 ռ.
8) ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի 40
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի 40
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի 35
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՑԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով 15
12) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ Մ.-ի 15
13) ՄԻԼՏՈՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի 30
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի 25
15) ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուդարեանի 80
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ. 50
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլէրի, թարգմ. Իս. Յարութիւնեանի. . . . . 1 ռ.
18) ՓԱՐԱՒՕՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եղեկեանի. 40
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII. 15
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շիսեանի 20
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շիսեանի 25

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը հիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադարձը վրայ պահանջողներին զեղչ կը տրվի միայն 25%։ (6) 0—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный